ղութեամբ եւ բազում ծախուք հազիւ կարաց աւարտել զնորոգութիւն վանաց Բեթղեհէմի, եւ եդ արձանագիր 'ի վերայ արտաքին դրան եկեղեցւոյն, (1621)։

Գնեաց նաեւ արտաքոյ քաղաքին 'ի գիւղօրայս՝ 'ի Վէլէճէ, 'ի Մալհա՝ և 'ի Ճոււայ այգիս պարտէզս ձիթենեաց թուով իբրեւ 35, որպէս արարեալ էին նախորդքն իւր Անդրիաս և Դաւիթ Պատրիարքունք։ Եւ 'ի վերայ ճանապարհին Բեթղեհէմի 'ի կողմն յարեւմտից մերձ 'ի գերեզմանն Հռաքելի, գնեաց յԱրաբացւոց պարտէզ ձիթենեաց (1620)․ և յետոյ Ջուղայեցի Սարգիս անուն ոմն 'ի միաբանից՝ գնեաց մաս մի եւս՝ և խառնեաց 'ի նա։ Եւ 'ի ժամանակս մեր Մեսրոպ և Աստուածատուր վարդապետք և այլք՝ յաւելին 'ի նա զայլ մասունս։ Եւ Տիգրանակերտցի Յակոբ եպիսկոպոս առաւել եւս ընդարձակեաց զտեղին, տնկեաց այգիս և ձիթենիս, եդիտ և մաքրեալ յարդարեաց զհին մեծամեծ ջրհորս՝ եւ կառոյց սենեակս, ուր գտան բեկորք քարանց դրօշմեալ Հայկական տառիւք, որպէս գրեցաք․ և կոչի յարդ տեղին յանուն Բարեյիշատակ Պատրիարքին՝ Պուրճ Տէր, և յԱրաբացւոց՝ Աբու Հաննա։ Իսկ 'ի գիւղն Վէլէճէ՝ առաջի աղբեր այգի մեծ՝ իբրեւ 30 արտավար, յորում և ծառաստունք ձիթենեաց, շինեալ 'ի նմա խուց ինչ՝ յոր երթայր երբեմն յամառնային եղանակին․ Նոյնպէս և 'ի կողմանս Փիլիպպոսի աղբեր, զոր Արաբացիք կոչեն Հանիյէ, և յայլ տեղիս։ Սակայն 'ի դառնութենէ ժամանակին այնորիկ՝ բազում անգամ եղեն վէճք և դատաստանք վասն նոցա, զի 'ի նեղիլ Արաբացւոց՝ եկեալ բազմութեամբ վկայէին 'ի դատարանի՝ թէ սոքա ամենեքեան են կալուածք Ս․ Յակոբայ․ և յընդարձակին՝ դարձեալ տիրէին նոցա, զորս կրկին և վերստին գնեալ են զնոսա միաբանք, որոց վաւերական մուրհակքն ցարդ պահին անկորուստ, այլ տեղիքն յափշտակեալ և կորուսեալ։ Գտանին նաեւ 'ի կարգս գրոց հին Հէօճճէթք կալուածոց՝ գրեալ 'ի մագաղաթի և 'ի բամբակեայ թղթի, այլ տեղիքն չերեւին 'ի միջի, զի փոփոխութիւնք ժամանակի եւ իշխանութեան՝ այլայլեալ են զամենայն ինչ, է՝ զի տիրեալ յԱրաբացւոց, և է՝ զի յիշխանութեանց․ և զոմանս եւս 'ի վաճառ հանեալ, որպէս զպարտէզն ձիթենեաց՝ մերձ 'ի